# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**
Նարեկ Կարապետյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունների կոորդինացման բաժնի պետ

**2. Գործուղման վայրը և ժամկետները՝** Կորեայի Հանրապետություն, ք. Սեուլ, 2023 թվականի նոյեմբերի 14-ից մինչև նոյեմբերի 17-ը ներառյալ:

**3. Հրավիրող կողմը՝** Ասիական զարգացման բանկ

**4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Գործուղման նպատակն էր մասնակցել «Կայուն ապագայի կառուցում. կլիմայական գործողությունների ինտեգրում հարկաբյուջետային շրջանակներին և հանրային ֆինանսների կառավարման համակարգերին» թեմայով միջազգային համաժողովին, որի ընթացքում քննարկվել են կլիմայական փոփոխության հնարավոր ազդեցությունները հարկաբյուջետային քաղաքականության վրա և հարկաբյուջետային քաղաքականության իրականացման մեջ վերջինս հաշվի առնելու անհրաժեշտությունը և հնարավորությունները:

Համաժողովը, ընդհանուր առմամբ, ծառայել է կլիմայական հիմնահարցերը հարկաբյուջետային քաղաքականությանը ինտեգրելու քննարկումների յուրօրինակ հարթակ՝ միավորելով տարբեր երկրների ներկայացուցիչներին, ինչպես նաև աշխարհում ոլորտի առաջատար մասնագետներին:

**5. Քննարկված թեմաները՝**

1. Հարկաբյուջետային կայունության վրա կլիմայական փոփոխության ռիսկերի գնահատում,
2. Կլիմայի դեմ պայքարի գործողությունները հարկաբյուջետային քաղաքականության ինտեգրելու հիմնահարցերը,
3. Կլիմայական փոփոխությունները և պետական ֆինանսների կառավարման համակարգերը
4. Իննովացիոն կլիմայական ֆինանսավորման ռազմավարությունները,
5. Կլիմային փոխկապված ֆինանսական հաշվետվողականություն և կանաչ ծրագրեր,
6. Կլիմայական փոփոխությանը կապված նախագծերը անդամ երկրներում:

**6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Համաժողովն ուղեկցվել է տարաբնույթ քննարկումներով և մտքերի փոխանակումներով: Առանձնակի կարևորվեց մասնակից երկրների կողմից պետական բյուջեի գործընթացում կլիմայական նշագրման անցնելու և վերջինս որկյալ ձևով իրականացնելու, ինչպես նաև կլիմայական ռիսկերի գնահատման ու հարկաբյուջետային քաղաքականության օրակարգ մտցնելու կարևորությունը:

Հայաստանը ներկայացնող մասնակիցների կողմից ներկայացվել է շնորհանդես՝ Հայաստանի կլիմայական փոփոխության պրոֆիլի, կլիմայի փոփոխությանը ադապտացման քաղաքականության, ինչպես նաև կլիմայի փոփոխությունից բխող հարկաբյուջետային կայունության ռիսկերի և ռիսկերի կառավարման ուղղությամբ կիրառվող մեխանիզմների վերաբերյալ:

**7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Այդպիսիք առկա չեն:

**8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Այդպիսիք առկա չեն:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը:**

**22 նոյեմբերի, 2023թ.**